ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի
Որոշում N 1/958L

28/07/2009

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԱՈՒԴԻՏԻ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԱՈՒԴԻՏԻ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 22.05.2009թ. թիվ 17 արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում Հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտի առաջատար աշխատակիցների միջազգային մասնագիտական որակավորման ձեռքբերման և շարունակական ուսուցման ապահովման վերաբերյալ կարգ»-ը՝ համաձայն Հավելված 1-ի (կցվում է):
2. Հանձնարարել Հաշվապահական հաշվառման վարչությանը կատարել համապատասխան փոփոխություններ 2008 թվականի ապրիլի 15-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատակիցների կողմից ֆինանսական, հաշվապահական, ապահովագրական և աուդիտորական ոլորտներում որակավորման հավաստագրեր ստանալու համար միջազգային չափանիշներին համապատասխանող ծրագրերին մասնակցության ծախսերի փոխհատուցման» վերաբերյալ թիվ 1/35Ա որոշման մեջ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2010թ-ի հունվարի 01-ից:

Նախագահ Արթուր Ջավադյան

Կ Ա Ր Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԱՈՒԴԻՏԻ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ.

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետև՝ Կենտրոնական բանկ) Հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտում ընդգրկված աշխատակիցների միջազգային մասնագիտական որակավորման ձեռքբերման և շարունակական ուսուցման ապահովման գործընթացը՝ մասնագիտական գիտելիքների զարգացման, իրականացվող աշխատանքների բարելավման, միջազգային չափանիշներին համապատասխանեցման, ինչպես նաև ձեռքբերված գիտելիքները Կենտրոնական բանկի մյուս աշխատակիցներին փոխանցելու նպատակով:

2. Սույն կարգում կիրառվող հիմնական հասկացություններն են.

1)Մասնագիտական որակավորում-մասնագիտական պատրաստվածության անհրաժեշտ մակարդակ (կրթություն, գիտելիք, հմտություն, փորձ)՝ որոշակի աշխատանք կատարելու համար:

2)Միջազգային մասնագիտական որակավորում-միջազգային ճանաչում ունեցող կազմակերպությունների կողմից տրվող մասնագիտական որակավորում:

3) Առաջատար աշխատակից-Զ և բարձր դասի աշխատատեղ զբաղեցնող աշխատակից:

4) ACCA- միջազգային մասնագիտական որակավորում հաշվապահության ոլորտում, որը տրվում է Որակավորված հաշվապահների ասոցիացիայի կողմից և բաղկացած է 14 փուլից (Հավելված 1):

5) CIA (որակավորված ներքին աուդիտոր)-միջազգային մասնագիտական որակավորում ներքին աուդիտի ոլորտում, որը տրվում է Ներքին աուդիտորների ինստիտուտի կողմից և բաղկացած է 4 փուլից (Հավելված 2):

6) CISA (որակավորված տեղեկատվական համակարգերի աուդիտոր)-միջազգային մասնագիտական որակավորում տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտի ոլորտում, որը տրվում է Տեղեկատվական համակարգերի աուդիտի և հսկման ասոցիացիայի (ISACA) կողմից և բաղկացած է մեկ փուլից:

7) CGEIT (ձեռնարկության տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարման որակավորում) - միջազգային մասնագիտական որակավորում տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտի ոլորտում, որը տրվում է Տեղեկատվական համակարգերի աուդիտի և հսկման ասոցիացիայի կողմից և բաղկացած է մեկ փուլից:

ԳԼՈՒԽ 2. Հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտում ընդգրկված առաջատար աշխատակիցների համար Կենտրոնական բանկի կողմից սահմանվող միջազգային մասնագիտական որակավորման տեսակներն ու փուլերը.

3. Հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտում ընդգրկված առաջատար աշխատակիցների համար Կենտրոնական բանկը սահմանում է միջազգային որակավորման հետևյալ տեսակները և մակարդակները.
4. Հաշվապահական հաշվառման վարչության կենտրոնական բանկի բյուջեի կատարման բաժնի առաջատար աշխատակիցների համար՝ ACCA-ի 4 փուլ – F1,F2, F3 և մեկ ընտրանքային փուլ F4-ից F9,
5. Հաշվապահական հաշվառման վարչության կենտրոնական բանկի գործունեության հաշվապահական կանոնակարգման և հաշվետվությունների բաժնի առաջատար աշխատակիցների համար՝ ACCA –ի 9 փուլ – F1-ից F9,
6. Գլխավոր հաշվապահի համար՝ ACCA –ի 14 փուլ՝ F1-ից P4, և մեկ ընտրանքային փուլ՝ P5, P6 կամ P7,
7. Ֆինանսական համակարգի քաղաքականության և ֆինանսական կայունության վարչության Բանկային մեթոդաբանության, Ապահովագրության մեթոդաբանության և Արժեթղթերի մեթոդաբանության բաժինների հաշվապահության ոլորտի առաջատար աշխատակիցների համար՝ ACCA –ի 9 փուլ՝ F1-ից F9,

8. Վերստուգիչ խմբի Ֆինանսական աուդիտի բաժնի առաջատար աշխատակիցների համար՝ CIA –ի 4 փուլ, կամ ACCA –ի 9 փուլ ՝ F1-ից F9:

9. Վերստուգիչ խմբի Գործառնական աուդիտի բաժնի առաջատար աշխատակիցների համար՝ CIA -ի 4 փուլ,

10. Վերստուգիչ խմբի Տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտի բաժնի առաջատար աշխատակիցների համար՝ CISA կամ CGEIT,

11. Գլխավոր վերստուգիչի համար՝ CIA-ի 4 փուլ կամ ACCA–ի 14 փուլ՝ F1-ից F9, P1-ից P3, P7 և մեկ ընտրանքային փուլ՝ P4, P5 կամ P6:

12. Սույն կարգի 4-11 կետերում նշված պահանջներն ամրագրվում են Վերստուգիչ խմբի, ինչպես նաև Հաշվապահական հաշվառման վարչության և Ֆինանսական համակարգի քաղաքականության և ֆինանսական կայունության վարչության հաշվապահական ոլորտին առնչվող Զ և բարձր դասի աշխատատեղերի նկարագրերում:

13. Հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտում ընդգրկված Զ և բարձր դասի թափուր աշխատատեղերի համալրման դեպքում դիմորդները պետք է համապատասխանեն աշխատատեղում ամրագրված միջազգային մասնագիտական որակավորման պահանջին:

14. Հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտում ընդգրկված առաջատար աշխատակիցները պետք է ձեռք բերեն միջազգային մասնագիտական որակավորում սույն կարգի 3-րդ գլխի սկզբունքների համաձայն:

ԳԼՈՒԽ 3. Հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտում ընդգրկված առաջատար աշխատակիցների մասնագիտական որակավորման ձեռքբերման սկզբունքները

15. ACCA–ի բոլոր 14 փուլերը հանձնելու համար սահմանվում է առավելագույնը 9 տարի ժամկետ, 9 փուլի համար՝ 4,5 տարի ղեկավար պաշտոն զբաղեցնող աշխատակիցների և 5 տարի՝ մյուս առաջատար աշխատակիցների համար, 4 փուլի համար՝ 1 և կես տարի:

16. CIA–ի բոլոր 4 փուլերը հանձնելու համար սահմանվում է 3 տարի ժամկետ:

17. CISA կամ CGEIT որակավորման ձեռքբերման համար սահմանվում է 3 տարի ժամկետ:

18. Որակավորված հաշվապահների ասոցիացիայի կողմից որևէ քննությունից ազատվելու դեպքում, քննությունից ազատված աշխատակիցը

համարվում է այդ քննությունը հանձնած՝ առանց Կենտրոնական բանկի կողմից դրամական խրախուսում ստանալու:

19. Սույն կարգի 3-11 կետերում նշված պահանջներից բացի, հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտում ընդգրկված առաջատար աշխատակիցների համար միջազգային կազմակերպությունների կողմից տրվող միջազգային մասնագիտական այլ որակավորումներն ընդունելի չեն Կենտրոնական բանկի կողմից:

20. Սույն կարգի 3-11 կետերում նշված քննությունները հանձնող աշխատակիցները պարբերաբար պետք է կազմակերպեն դասընթացներ Կենտրոնական բանկի շահագրգիռ ստորաբաժանումների աշխատակիցների/երիտասարդ մասնագետների համար:

21. CIA, CISA և CGEIT որակավորումները պահպանելու համար նշված քննությունները հանձնող աշխատակիցներին կենտրոնական բանկն ընձեռում է հնարավորություն մասնակցելու համապատասխան կազմակերպությունների կողմից պահանջվող և կուտակային միավորներ ապահովող դասընթացներին/կոնֆերանսներին՝ փոխհատուցելով անհրաժեշտ ծախսերը:

22. Միջազգային որակավորման առկայություն պահանջող աշխատատեղերին հավակնորդները/դիմորդները պետք է առնվազն հանձնած լինեն սույն կարգի 4-11 կետերում ամրագրված պահանջի համաձայն .

- գլխավոր հաշվապահ աշխատատեղին հավակնորդները/դիմորդները՝ ACCA-ի հինգ քննություն -F1, F2, F3 քննությունները և երկու ընտրանքային քննություն F4-F9 փուլերից
- գլխավոր վերստուգիչ աշխատատեղին հավակնորդները/դիմորդները՝ կամ ACCA-ի հինգ քննություն -F1, F2, F3 քննությունները և երկու ընտրանքային քննություն F4-F9 փուլերից, կամ CIA–ի մեկ քննություն, կամ Կենտրոնական բանկում հանձնեն CIA–ի որակավորման քննությունների I-ին փուլի տեստը, հավաքելով 75%:
- Հաշվապահական հաշվառման վարչության կենտրոնական բանկի բյուջեի կատարման և կենտրոնական բանկի գործունեության հաշվապահական կանոնակարգման և հաշվետվությունների,,բաժինների (բաժնի պետերի և այլ աշխատատեղերի), Ֆինանսական համակարգի քաղաքականության և ֆինանսական կայունության վարչության Բանկային մեթոդաբանության, Ապահովագրության մեթոդաբանության և Արժեթղթերի մեթոդաբանության բաժինների հաշվապահության ոլորտի աշխատատեղերին հավակնորդները/դիմորդները՝ ACCA-ի երեք քննություն- F1, F2, F3,
- Վերստուգիչ խմբի Ֆինանսական աուդիտի բաժնի պետի աշխատատեղին հավակնորդները/դիմորդները՝ ACCA-ի երեք քննություն- F1, F2, F3, կամ CIA–ի մեկ քննություն կամ Կենտրոնական բանկում հանձնեն CIA–ի որակավորման քննությունների I-ին փուլի տեստը, հավաքելով առնվազն 60%,

• Վերստուգիչ խմբի Ֆինանսական աուդիտի բաժնի այլ աշխատատեղերին հավակնորդները/դիմորդները՝ ACCA-ի երեք քննություն- F1, F2, F3, կամ CIA–ի մեկ քննություն կամ Կենտրոնական բանկում հանձնեն CIA–ի որակավորման քննությունների I-ին փուլի տեստը, հավաքելով առնվազն 40% ,
• Վերստուգիչ խմբի Գործառնական աուդիտի բաժնի պետի աշխատատեղին հավակնորդները/դիմորդները՝ ՝ CIA–ի մեկ քննություն կամ Կենտրոնական բանկում հանձնեն CIA–ի որակավորման քննությունների I-ին փուլի տեստը, հավաքելով առնվազն 60% ,
• Վերստուգիչ խմբի Գործառնական աուդիտի բաժնի այլ աշխատատեղին հավակնորդները/դիմորդները՝ CIA–ի մեկ քննություն կամ Կենտրոնական բանկում հանձնեն CIA–ի նախապատրաստական փուլի տեստը, հավաքելով առնվազն 40%,
• Վերստուգիչ խմբի Տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտի բաժնի պետի աշխատատեղին հավակնորդները/դիմորդները՝ CISA կամ CGEIT, կամ Կենտրոնական բանկում հանձնեն CISA քննության նախապատրաստական փուլի 1-ին(SS աուդիտի գործընթացը) և 5-րդ(Տեղեկատվական ռեսուրսների անվտանգություն) բաժիններից տեստը, հավաքելով 64%,
• Վերստուգիչ խմբի Տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտի բաժնի այլ աշխատատեղերին հավակնորդները/դիմորդները՝ CISA կամ CGEIT, կամ Կենտրոնական բանկում հանձնեն CISA քննության նախապատրաստական փուլի 1-ին(SS աուդիտի գործընթացը) և 5-րդ(Տեղեկատվական ռեսուրսների անվտանգություն) բաժիններից կազմված տեստը, հավաքելով 43%:

23. Սույն կարգի 22-րդ կետի պահանջներին բավարարող հավակնորդների/դիմորդների աշխատատեղի այլ պահանջներին համապատասխանությունը պարզվում է բանավոր հարցազրույցի միջոցով:

24. Սույն կարգի 15-17 կետերով սահմանված ժամկետներում քննությունները չհանձնելու դեպքում Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ կամ լուծվում է աշխատատեղը զբաղեցնող աշխատակցի աշխատանքային պայմանագիրը կամ սահմանված գործակցի հանդեպ 30%-ով իջեցվում է աշխատակցի կիսամյակային պարգևատրման չափը:

25. Անձնակազմի կառավարման վարչության կողմից պարբերաբար իրականացվում է քննությունների հանձնման ընթացիկ իրավիճակի մոնիտորինգ և արդյունքները ներկայացվում Կենտրոնական բանկի ղեկավարությանը:

ԳԼՈՒԽ 4. Այլ դրույթներ.

26. Կենտրոնական բանկը կատարում է ACCA, CIA յուրաքանչյուր փուլի և CISA, CGEIT քննությունները հանձնելու հետ կապված ծախսերը

(դասագրքեր, անհրաժեշտության դեպքում՝ ճանապարհածախս, ուսման վճար, անդամավճար):

27. Կենտրոնական բանկը վճարում է միևնույն քննությունը հանձնելու հետ կապված ծախսերը մեկ անգամ:

28. Միևնույն քննությունը երկրորդ և ավելի անգամ հանձնելու հետ կապված ծախսերը կատարվում են աշխատակցի կողմից:

29. ACCA, CIA, CISA և CGEIT քննություններին նախապատրաստվելու համար Կենտրոնական բանկի կողմից ձեռքբերված դասագրքերը հանձնվում են Կենտրոնական բանկի գրադարան:

30. Յուրաքանչյուր քննության դրական արդյունքի դեպքում աշխատակիցը պարգևատրվում է՝ համաձայն Կենտրոնական բանկի նախագահի 10/06/2009թ. թիվ 1/736Լ որոշման:

31. ACCA, CIA, CISA և CGEIT միջազգային մասնագիտական որակավորում ստանալուց հետո 2 տարվա ընթացքում իր նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծող աշխատակիցներից Կենտրոնական բանկը հետ կպահանջի վերջին երկու քննությունների հետ կապված ծախսերը:

Հավելված 1

ACCA

Հիմնական փուլ (մասամբ որակավորված հաշվապահներ)

F1-Հաշվապահը բիզնեսում (Accountant in business)
F2 –Կառավարման հաշվապահություն (Management accounting)
F3 – Ֆինանսական հաշվապահություն (Financial accounting)
F4- Կորպորատիվ և բիզնես օրենք (Corporate and business law)
F5-Կատարողականի/Արտադրողականության կառավարում (Performance management)
F6 –Հարկում (Taxation),
F7-Ֆինանսական հաշվետվություններ (Financial reporting)
F8-Աուդիտ և երաշխավորություն (Audit and assurance)
F9- Ֆինանսական կառավարում (Financial management)

Մասնագիտական փուլ (որակավորված հաշվապահներ)

P1-Մասնագիտական հաշվապահ (Professional accountant)
P2-Կորպորատիվ հաշվետվություն (Corporate reporting)
P3-Բիզնեսի վերլուծություն (Business analysis)
P4-Ֆինանսական կառավարում՝ խորացված (Advanced financial management)
P5-Կատարողականի կառավարում՝ խորացված (Advanced performance management)
P6-Հարկում՝ խորացված (Advanced taxation)
P7-Աուդիտ և հավաստիացում՝ խորացված (Advanced audit and assurance)

Հավելված 2

CIA

1. Ներքին աուդիտի գործունեության դերը կառավարման, ռիսկի և հսկման ոլորտում

(Internal audit activity role in governance, risk and control)

2. Ներքին աուդիտի գործունեության իրականացում

(Conducting the internal audit engagement)

3. Բիզնեսի վերլուծություն և տեղեկատվական տեխնոլոգիաներ

(Business analysis and information technology)

4. Բիզնեսի կառավարման հմտություններ

(Business management skills)